ԼԱՎ ՍԿԻԶԲ ՈՒ ԼԱՎ ԱՎԱՐՏ ՈՒՆԵՑԵՔ

Նախքան քարոզի հիմնական տեքստին անցնելը, ես կցանկանայի մի փոքր բացահայտել այս պատմության անձերի և միմյանց հետ նրանց խնամի հարաբերությունների մասին: Գոթողիան Իսրայելի Աքաաբ թագավորի և Հեզաբել թագուհու դուստրն էր, և նա ամուսնացավ Հուդայի թագավոր Հովսափատի ավագ որդու՝ Հովրամի հետ: Եղիան Հեուին Իսրաելի թագավոր է օծվում մեկ նպատակով որպեսզի բնաջնջի ամբողջ Աքաբի ընտանիքը: Եվ հենց այդպես էլ նախատէսվածի պես եղավ: Հեուն կատարեց իր առջեւ դրված առաջադրանքը, սպանեց նաև Գոթողիայի ավագ որդուն՝ Օքոզիային: Օքոզիայի մայրը՝ Գոթողիան (Աքաբի ու Հեզաբելի աղջիկը, Հովսափատի հարսը), երբ տեսավ, իր որդիու մահը, վեր կացավ և ոչնչացրեց Հուդայի տան ամբողջ թագավորական սերունդը, բացի մեկից... Հովասից:

*Բ Մնաց. 22:11-12 – Սակայն թագավորի դուստր Հոսաբեեն թագավորի որդիների սպանվելու ժամանակ նրանց միջից գողացավ տարավ Օքոզիայի որդի **Հովասին** և նրան իր դայակի հետ դրեց անկողինների սենյակում: Եվ այսպես Հովրամ թագավորի դուստր Հոսաբեեն՝ Հովիադա քահանայի կինը, որովհետև նա Օքոզիայի քույրն էր, թաքցրեց նրան Գոթողիայից, նա էլ չսպանեց նրան: Հովասը վեց տարի Աստծու տանը թաքնված մնաց նրանց հետ, և Գոթողիան էր թագավորում երկրում:*

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ. Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 24:1-23

1 Հովասը յոթ տարեկան էր, երբ թագավոր դարձավ, և քառասուն տարի թագավորեց Երուսաղեմում: Նրա մոր անունն էր Սաբիա Բերսաբեեցի: 2 Հովիադա քահանայի բոլոր օրերին Հովասն ուղիղ գործեց Տիրոջ առաջ: 3 Հովիադան նրա համար երկու կին առավ, որոնցից նա տղաներ և աղջիկներ ունեցավ: 4 Դրանից հետո Հովասի սիրտն ուզեց Տիրոջ տունը նորոգել: 5 Նա հավաքեց քահանաներին ու ղևտացիներին և ասաց նրանց. Ելեք գնացեք Հուդայի երկրի քաղաքները և ամբողջ Իսրայելից տարեցտարի փո՛ղ հավաքեք ձեր Աստծու տունը նորոգելու համար: Եվ շո՛ւտ արեք այդ գործը: Սակայն ղևտացիները շուտ չարեցին: 6 Թագավորը կանչեց Հովիադա քահանայապետին և ասաց նրան. Ինչո՞ւ ղևտացիներից չես պահանջում, որ Հուդայից ու Երուսաղեմից բերեն Տիրոջ ծառա Մովսեսի և Իսրայելի ժողովականների դրած տուրքը վկայության խորանի համար, 7 որովհետև անօրեն Գոթողիան և նրա որդիները բռնությամբ մտել էին Աստծու տունը և Տիրոջ տան բոլոր նվերները գործածել Բահաղի համար:

I. ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱ ԼԱՎ ՍԿԻԶԲ Է:

***2** <u>Հովիադա</u> քահանայի բոլոր օրերին Հովասն ուղիղ գործեց Տիրոջ առաջ:*

Մենք կարիք ունենք ուրիշների, որոնք կօգնեն մեզ ապրել քրիստոնեական կյանքով: Վտանգավոր է, երբ մենք չունենք հոգևոր խորհրդատուներ կամ եղբայրներ կամ քույրեր, որպեսզի ճշմարտությունն ու քաջալերանքը խոսեն մեր կյանքում:

4 Դրանից հետո Հովասի սիրտն ուզեց Տիրոջ տունը <u>նորոգել</u>:

- ***2024 թվականը հայտարարում եմ վերականգնման տարի.***

8 Թագավորը հրամայեց, և մի արկղ պատրաստեցին ու դրեցին Տիրոջ տան դռանը՝ դրսում: 9 Մունետիկ կանչել տվեցին Հուդայում և Երուսաղեմում, որ բերեն Աստծու ծառա Մովսեսի՝ Իսրայելի վրա անապատում դրած տուրքը Տիրոջ համար: 10 Բոլոր իշխաններն ու ամբողջ ժողովուրդը ուրախացան, և բերում ու գցում էին արկղի մեջ, մինչև որ այն լցվեց:

- ***Երկրպագությունը ուրախության առատություն է բերում մեր կյանք:***
- ***Ճշմարիտ երկրպագությունը փոխում է մեր կյանքի տեսակետը:***

12 Թագավորն ու Հովիադան այդ փողը տալիս էին Տիրոջ տան ծառայության գործն անողներին, որոնք քարհատներ և հյուսներ էին վարձում Տիրոջ տունը նորոգելու համար, ինչպես նաև երկաթագործներին ու պղնձագործներին՝ Տիրոջ տունն ամրացնելու համար:

- ***Այս պատմությունը լավ սկիզբ ունեցավ, բայց վատ ավարտ: Աղոթքս այն է, որ տարին լավ սկսենք և լավ ավարտենք:***

II. ՏԻՐՈՋԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ՝ (ԼՔԵԼԸ) ՇԱՏ ՎԱՏ ԱՎԱՐՏ Է:

- ***Այո՛, Աստված խոստացել է, որ «Ես երբեք չեմ թողնի քեզ և չեմ լքի քեզ» (Եբր. 13:5): Եվ հարցն այն է, թե արդյոք մենք կթողնե՞ք Տիրոջը կյանքի հանգամանքների պատճառով:***

*17 Հովիադայի մահից հետո Հուդայի իշխանները եկան ու խոնարհվեցին թագավորի առաջ, և թագավորը լսեց նրանց: 18 Նրանք **<u>լքեցին</u>** իրենց հայրերի Տեր Աստծու տունը և ծառայեցին աստարովթներին ու կուռքերին, և նրանց այս հանցանքի համար Հուդայի և Երուսաղեմի վրա Տիրոջ բարկությունն իջավ:*

- ***Երկրորդ Մնացորդաց 24.19-ում ասվում է, որ Աստված մարգարեներ ուղարկեց, որպեսզի վերադարձնեն [Հովասին և մյուսներին] նրա մոտ:***

20 Աստծու Հոգին եկավ Հովիադա քահանայի որդի Զաքարիայի վրա, և նա, կանգնելով ժողովրդի առաջ մի բարձր տեղ, ասաց նրանց. Այսպես է ասում Աստված. "Ինչո՞ւ եք զանց անում Տիրոջ պատվիրանները. դուք հաջողություն չեք ունենա, <u>որովհետև լքել եք Տիրոջը, և նա էլ ձե՛զ լքեց</u>":

21 Նրանք հարձակվեցին նրա վրա և թագավորի հրամանով քարկոծեցին նրան Տիրոջ տան սրահում: 22 Հովաս թագավորը չհիշեց այն բարեգթությունը, որ ունեցել էր իր հանդեպ Զաքարիայի հայր Հովիադան, և սպանեց նրա որդուն: Մեռնելիս նա ասաց. «Տե՛րը թող տեսնի և պահանջի»:

*Բ Մնաց. 24:23-25 – Հաջորդ տարի նրա դեմ դուրս եկավ ասորիների զորքը, եկան Հուդայի ու Երուսաղեմի վրա, ժողովրդի միջից կոտորեցին ժողովրդի բոլոր իշխաններին և նրանց ամբողջ ավարն ուղարկեցին Դամասկոս՝ թագավորին: Թեև ասորիների զորքերը եկան քիչ մարդկանցով, բայց Տերը չափազանց շատ զորք մատնեց նրանց ձեռքը, **որովհետև լքել էին իրենց հայրերի Տեր Աստծուն:** Եվ այսպես Հովասի դատաստանն արեցին: Երբ նրանք գնացին այնտեղից՝ Հովասին ծանր վիրավորված թողնելով, **նրա դեմ դավաճանություն արեցին նրա ծառաները՝** Հովիադա քահանայի որդիների արյան համար, և սպանեցին նրան իր անկողնում, և նա մեռավ: Նրան թաղեցին Դավթի քաղաքում, բայց չթաղեցին թագավորների դամբարանում:*

III. ԱՅՍՕՐ՝ ԱՅՍ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՕՐԸ, ՄԵՆՔ ՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԵՆՔ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ:

*Եբր.3:7 – Դրա համար Սուրբ Հոգին այսպես է ասում. Այսօր եթե **նրա ձայնը լսեք**, ձեր սրտերը մի՛ կարծրացրեք...*

Եբր. 3:15 – Քանի որ ասվում է. «Այսօր եթե նրա ձայնը լսեք, ձեր սրտերը մի՛ կարծրացրեք, ինչպես դառնության օրերին» (Սաղ. 95.7-8):

Եբր. 4:7 – Աստված նրանց դարձյալ մի օր է սահմանում՝ «Այսօրը». երկար ժամանակ հետո Դավթի միջոցով ասվեց. «Այսօր եթե նրա ձայնը լսեք, ձեր սրտերը մի՛ կարծրացրեք» (Սաղ. 95.7-8):

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՉ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: